ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

7 փետրվարի ուրբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

14
(3045)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՇԽԱՐՀԸ ՄԵՐԺՈՒՄ Է ԱՀԿ-ԻՆ, ԻՍԿ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՏԱՃՈՒՄ Է

Աշխարհը խառնված է, գծվում են նոր կանոններ, իսկ Հայաստանի Կառավարությունը, այս դեպքում՝ ի դեմս առողջապահության ոլորտի, խոր թմբիրի մեջ է:

Փակվեց ամենախոշոր դոնոր հանդիսացող USAID-ն, քանի որ ԱՄՆ կառավարության արդյունավետության բարձրացման վարչության պետ Իլոն Մասկը հայտարարեց. «Գիտեք, USAID-ն ֆինանսավորել է կենսաբանական զենքի հետազոտությունը, ներառյալ՝ «ՔՈՎԻԴ 19»-ը, որը սպանել է միլիոնավոր մարդկանց»:

Նախօրեին հայտնի դարձավ, որ Արգենտինան դուրս կգա Առողջապահության համաշխարհային կազմակերպությունից (ԱՀԿ)՝ հետեւելով անցյալ ամիս նախագահ Դոնալդ Թրամփի գործադիր հրամանին՝ Միացյալ Նահանգները դուրս բերել Առողջապահական համաշխարհային խմբից:

Չինաստանն էլ իր հերթին է ազդարարել, որ կարող է դեմ լինել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) ազգային անդամավճարների ծրագրված բարձրացմանը: Կարճ ասած՝ աշխարհը սկսել է մերժել ԱՀԿ-ին, իսկ Հայաստանը դեռ շարունակում է մնալ այդ կազմակերպության անդամ, ավելին՝ ակտիվորեն այնտեղից ինչ-ինչ ծրագրեր ու ապրանքներ է ստանում, դա էլ դեռ ամենը չէ. այդ կառույցի հետ սերտ համագործակցած (գուցե համագործակցող) Արսեն Թորոսյանին Նիկոլ Փաշինյանն իր հետ ԱՄՆ է տարել ՀՀ պետբյուջեի հաշվին: Արսեն Թորոսյանի հովանավորյալ փոխնախարար Լենա Նանուշյանը, ըստ նախարարությունում տարածված կարծիքի, շարունակում է ջանքերը՝ Անահիտ Ավանեսյանին պաշտոնից հեռացնելու եւ նրա տեղը զբաղեցնելու ուղղությամբ:

ՀՀ իշխանությունները շարունակում են մնալ ոչ ճկուն ու չեն ֆիքսում փոփոխության քամիների ուղղությունները, ինչը շատ արագ անում են հատկապես «հարեւանները», դրանով իսկ միշտ ստանում են հարաբերական առավելություն մեր նկատմամբ:

Նիկոլ Փաշինյանի թիմում չեն հասկանում, որ Միացյալ Նահանգներում փոխվում են նարատիվները:

Դե իսկ «Քովիդի» առնչությամբ քրեական եւ մյուս վարույթները տեղում դոփում են: Իրավապահ համակարգը պարտվում է քաղաքական իշխանությանը՝ ի դեմս Արսեն Թորոսյանի:

ՔՊ-ական Անդրանիկ Քոչարյանը, որը կլոր տարին զբաղված է թիմում խարդավանքներ հյուսելով, իր թիմակիցներին վարկաբեկելով, հիմա փորձում է պարզերես անել իրեն ու, ինչպես թիմակիցներն են բնութագրում, լրիվ այլ մարդ երեւալ: «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ թիմակիցներին պիտակավորելու, վարկաբեկելու, մեկին կաշառակերության համար մեղադրելու, մյուսին էլ «դեղ ցրող» պիտակավորելու համար ՔՊ-ում Անդրանիկ Քոչարյանին որոշել են պատժել՝ ԱԺ անվտանգության եւ պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնից հեռացնելով: Հարցը այն կարեւորությունն է ստացել, որ Նիկոլ Փաշինյանը Անդրանիկ Քոչարյանին «բերման» է ենթարկել ՔՊ վարչություն ու ստիպել ներողություն խնդրել պատգամավորներ Սիսակ Գաբրիելյանից եւ իր աներորդի Հրաչյա Հակոբյանից, որոնց Քոչարյանը վատաբանել էր՝ նրանց կապելով խաղադրույքներով եւ թմրաբիզնեսով հարստացող գործարարների հետ՝ ասելով՝ «գործարարի դեղ ցրողներ»: Հիմա իր՝ մազից կախված պաշտոնը փրկելու համար Անդրանիկ Քոչարյանը փորձում է սիրաշահել բոլորին, վերականգնել հարաբերությունները թիմակիցների հետ, անգամ նրանց իր սենյակ է կանչում, զրուցում, որպեսզի ցույց տա, թե իր մասին թյուր կարծիք են ձեւավորել, իսկ իրականում ինքն ամենեւին «խառնակիչ» չէ, ինչպես բնորոշում են իրեն թիմում: Չնայած Քոչարյանի ջանքերին՝ ՔՊ-ականները պատմում են, որ ամենեւին էլ չեն հավատում նրան. Անդրանիկ Քոչարյանը նույնն է ու փոխվողը չէ: Մեր տեղեկություններով՝ այն բանից հետո, ինչ Քոչարյանը հրապարակավ ներողություն է խնդրել Հրաչյա Հակոբյանից եւ Սիսակ Գաբրիելյանից, Քոչարյանից վիրավորված մյուս ՔՊ-ականները եւս դիմել են Փաշինյանին ու ասել՝ իրենք եւս սպասում են ներողության:



Թեեւ վարչապետի եւ մյուս բարձրաստիճան պաշտոնյաների կեցավայր ծառայող կառավարական առանձնատներն ունեն հատուկ խոհարարներ, սպասավորներ, այգեպաններ, թիկնապահներ եւ այլն, բայց Փաշինյանը փորձում է ցույց տալ, թե իր տիկինն է օրվա տոլման փաթաթում, ինքն էլ հետամանրյա ձվածեղն է պատրաստում: Իսկ թե պետբյուջեից որքան գումար է ծախսվում Փաշինյանի եւ մյուսների ապրուստի վրա, պետական լուրջ գաղտնիք են համարում գործադիրում: «Ժողովուրդ» օրաթերթը հարցումով դիմել էր վարչապետի աշխատակազմ՝ խնդրելով պատասխանել հետեւյալ հարցերին 1) որքա՞ն գումար է հատկացվում Կառավարական առանձնատների՝ 2025 թվականի սպասարկման համար: 2) Ներկայացնել հատկացման բացվածքը՝ համապատասխանաբար տրամադրելով հաստիքացուցակը եւ, ըստ հաստիքի աշխատանքի, վարձատրության չափը: Պատասխանել են կիսատ ու ոչինչ չասող: Առաջին հարցի պատասխանը թերեւս հստակ է՝ 2025 թվականին դրամաշնորհային անվանումով հատկացվել է 621 մլն 340 հազար դրամ՝ գրեթե 1 մլն 561 հազար ԱՄՆ դոլար: Այս գումարը 2022 թվականի համեմատ 150 մլն դրամով ավելի է: Թերեւս այն բանի համար, որ Նիկոլ Փաշինյանը չմրսի Կառավարական ամառանոցում, ինչպես դժգոհում էր ուղիղ եթերում: Երկրորդ հարցի պատասխանը թերեւս անվերծանելի է: Կարճ ասած՝ Կառավարական առանձնատան աշխատակազմի հաստիքացուցակը պետական նշանակության գաղտնիք է, ինչպես, օրինակ, զինված ուժերի թիվը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

Համընդհանուր հայտարարագրումը ոսկոր է դարձել, ոչ միայն իշխանության, այլ նաեւ հանրության կոկորդին: Քաղաքացիները ֆինանսական միջոցները չհայտարարագրելու նոր մեթոդ են գտել: Կառավարությունը պարտադրողական թեզեր է «կերակրում» լսարանին, իսկ լսարանը բողոքում եւ բոյկոտում է: Սրան ի պատասխան, փոխարենը հայտարարագրումը դադարեցնելուն, իշխանությունը «գայթակղիչ» առաջարկներ է անում. օրինակ՝ «Հայտարարագրեք ձեր երեխայի ուսման համար վճարված գումարը, եւ դրա փոխարեն կվերադարձվի 100 հազար դրամ»: Իսկ հայտարարագիր չլրացնելու դեպքում՝ ամեն բան այդքան էլ սարսափելի չէ: Հայտարարագրում առկա թերի տվյալների համար անձը կարող է այն լրացնել 2-րդ անգամ: Անձին եւս մեկ շանս տալիս է Պետական եկամուտների կոմիտեն շտկման համար: 3-րդ դեպքում քաղաքացիներին կտրվի նախազգուշացում: 4-րդ դեպքում, շտկումները չուղղելուց հետո, քաղաքացին տուգանվում է 5.000 դրամ, իսկ 1 մլրդ համախառն ներքին արդյունք հայտարարագրած անձանց դեպքում տուգանքը 50 հազար դրամ կկազմի: 700 հազար հայտարարատու անձից մինչ այժմ լրացրել է 4 հազար 400 մարդ, իսկ մյուսները նախընտրում են տուգանվել 5.000 դրամ եւ այլեւս չլրացնել հայտարարագիր:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐԿՐՈՒՄ ՉԵՆ

ՈՎ Է ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ու ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը երկրում չեն. միաժամանակ մեկնել են գործուղման: Նիկոլ Փաշինյանը տիկնոջ՝ Աննա Հակոբյանի հետ փետրվարի 3-7-ը աշխատանքային այցով Ամերիկայի Միացյալ Նահանգներում է: Նիկոլ Փաշինյանի հետ ԱՄՆ են մեկնել նաեւ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն ու ՔՊ-ական պատգամավոր Արսեն Թորոսյանը: Այցի շրջանակներում Փաշինյանը Վաշինգտոնում մասնակցել է 5-րդ ամենամյա Միջազգային կրոնական ազատության գագաթնաժողովին, ինչպես նաեւ «Ազգային աղոթքի նախաճաշին»: Նախատեսված են նաեւ մի շարք այլ հանդիպումներ:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն ու իր թիմն էլ մեկնել են Լյուքսեմբուրգ, այնտեղից էլ՝ Բելգիա, իսկ ծախսերի մեծ մասը «հոգացել» է պետբյուջեն:

Ազգային ժողովի պաշտոնական աղբյուրներից պարզեցինք, որ Ալեն Սիմոնյանը փետրվարի 3-5-ը պաշտոնական այցով եղել է Լյուքսեմբուրգում, իսկ 6-8-ը կլինի Բրյուսելում:

ԱԺ նախագահի պաշտոնական պատվիրակության 11 հոգանոց կազմում ընդամենը 2 պատգամավորներ կան ՔՊ-ից, մեկը Արման Եղոյանը, մյուսը Սիմոնյանի նախկին օգնական Հասմիկ Հակոբյանը: Մյուսները ԱԺ նախագահի աշխատակազմի աշխատակիցներ են՝ լուսանկարիչ, օպերատոր, մամուլի քարտուղար, արարողակարգի բաժնի մասնագետ ու ղեկավար, արտաքին կապերի վարչության մասնագետ ու ղեկավար եւ խորհրդական՝ արդուկի գծով Աշխեն Հայրապետյանը: Իսկ երբ երկրի առաջին եւ երկրորդ դեմքերը երկրում չեն, ո՞վ է այս պարագայում ՀՀ պատասխանատուն, ո՞ւմ վրա են դրված պարտականությունները:

«Ժողովուրդ» օրաթերթը այս հարցերի վերաբերյալ զրուցել է սահմանադրագետ Վարդան Պողոսյանի հետ:

-Պարոն Պողոսյան, երկրի առաջին եւ երկրորդ դեմքերը՝ վարչապետն ու ԱԺ նախագահը, երկրում չեն, մեկնել են գործուղման: Այս դեպքում ո՞վ պետք է կատարի ղեկավարի պարտականությունները, անհրաժեշտության դեպքում ո՞վ է իրավասու վճռորոշ որոշումներ կայացնել:

-Վարչապետի պարագայում կա առաջին փոխվարչապետ, ԱԺ նախագահն էլ տեղակալներ ունի: Այսինքն՝ սահմանադրականության հարց այստեղ չկա, իրավական առումով էլ չկա խոչընդոտ: Եթե հանկարծ երկրում վատ իրադարձություն է տեղի ունենում, պետք է գործադիրը արձագանքի: Հիմա, եթե վարչապետը չկա՝ փախել է, դրսում է կամ արձակուրդում է, իրեն փոխարինող անձ կա՝ փոխվարչապետը:

-Այս պարագայում՝ Մհեր Գրիգորյանը:

-Այո: Իսկ Ազգային ժողովի նախագահը պատգամավոր է, որը պրոտոկոլային առումով ներկայացնում է ամբողջ Ազգային ժողովը, եւ նրա գործառույթները բացառապես օրենսդրական գործառույթների են վերաբերում, ուրիշ ոչինչ:

-Իսկ եթե ստեղծվի իրավիճակ, երբ անհրաժեշտություն առաջանա երկրում արտակարգ դրություն մտցնել, ո՞վ պետք է այդ որոշումը կայացնի, ո՞վ է պատասխանատու:

-Կառավարությունն է արտակարգ դրություն հայտարարում. կառավարության նիստ պետք է հրավիրվի, որոշում ընդունեն, ուղարկեն Ազգային ժողով, ԱԺ-ն էլ, եթե չի վերացնում որոշումը, ապա արտակարգ դրությունը պահպանվում է:

Կառավարության նիստը պետք է ղեկավարի փոխվարչապետը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԲԱՐՈՅԱԼՔՄԱՆ Է ՀԱՍՑՐԵԼ

4-5 տարի է՝ իշխանությունը ներարկում է այն մոտեցումը, որ մենք՝ հայերս, հաղթելու, պայքարելու հնարավորություն չունենք եւ ճիշտը հանձնվելն է: Այս մասին հայտնել է ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը:

«Իշխանությունը մեր հասարակությանը բարոյալքման այնպիսի աստիճանի է հասցրել, որ դրա թիվ մեկ մեղավորը հայտարարում է, որ պարտությունների միջոցով առավել անկախ ու ինքնիշխան ենք դառնում, իսկ ներսում հանրային ընդվզումը նվազագույնի վրա է: 4-5 տարի է՝ իշխանությունը ներարկում է այն մոտեցումը, որ մենք՝ հայերս, հաղթելու, պայքարելու հնարավորություն չունենք եւ ճիշտը հանձնվելն ու թշնամիների գթասրտությունն ակնկալելն է: Ներկայիս փուլը քննաշրջան է քաղաքացու համար, որովհետեւ եթե իշխանությունը ֆիքսեց, որ պլանն աշխատել է, իսկ մարդիկ հարմարվողի եւ ընկածի կարգավիճակում են, ապա նոր պարտությունները երաշխավորված են», - նշել է նա:

ԻՐԱՆԸ ԴԵՄ Է ՄԻՋԱՆՑՔԻ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ

Իրանը մշտապես աջակցել է Հայաստանի աճին ու հզորացմանը եւ երկու երկրների հարաբերություններն աստիճանաբար հասել են հասունության անհրաժեշտ մակարդակին:

Այս մասին, նշել է Հայաստանում Իրանի դեսպան Մեհդի Սոբհանին: «Այսօր մեր երկկողմ հարաբերություններում առկա է փոխադարձ ըմբռնում, իսկ փոխհարաբերությունների տնկին վերածվել է հաստաբուն ծառի: Իրանն իր հանձնառություն է համարում տարածաշրջանում հարատեւ խաղաղության եւ կայունության հաստատումը: Իրանը կտրականապես դեմ է միջազգայնորեն ընդունված սահմանների փոփոխությանը, աշխարհաքաղաքական փոփոխություններին եւ ուժի կիրառմանը տարածաշրջանային խնդիրների լուծման համար: Իրանը վճռականորեն աջակցում է երկրների, հատկապես Հայաստանի տարածքային ամբողջականությանը: Կեղծ նարատիվների, սպառնալիքների եւ կասկածելի տեսանյութերի ստեղծումը չի կարող խաթարել երկու երկրների միջեւ առկա ամուր հարաբերությունները կամ պառակտում ու կասկածներ նետել մեր միջեւ»,- ասել է դեսպանը:

Նրա խոսքով՝ անցյալ տարվա ընթացքում փայլուն արդյունքներ են արձանագրվել երկու երկրների միջեւ, մեկնարկել է Հայաստան-Քաջարան ճանապարհի շինարարությունը, երրորդ էլեկտրահաղորդման գծի աշխատանքներն ավարտական փուլում են, դիվանագիտական փոխայցերը, փոխըմբռնումն ու փոխադարձ ընկալումը թույլ չեն տվել, որ «հարաբերությունների թշնամին կասկածներ, թյուրըմբռնումներ ստեղծի»: «Մենք շարունակում ենք առաջնորդվել այդ ճիշտ ճանապարհով: Երկու երկրների հարաբերությունների ապագան շատ պարզ է, եւ ոչ ոք չի կարող դա շեղել»,- ասաց նա եւ հայերենով հավելեց. «Կեցցե՛ Հայաստանը, կեցցե՛ Իրանը»:

ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ

Երեւանը չի կարող դադարեցնել հայերի դեմ հանցագործությունների հետաքննությունը ՄՔԴ-ում, թեեւ իրավունք ունի հետ վերցնել հայցերը:

Այս մասին հայտարարել է Միջազգային քրեական դատարանի նախկին դատախազ Լուիս Մորենո Օկամպոն: «Ցանկացած դեպքում դատախազը իրավունք ունի շարունակել հանցագործությունների վերաբերյալ հետաքննությունը իրավասության տարածման պահից՝ 2021 թվականի մայիսի 10-ից, եւ հետկանչից հետո մեկ տարվա ընթացքում», - ասել է նա:

Հայաստանի իշխանությունները մեկ տարի առաջ վավերացրել են ՄՔԴ-ի Հռոմի ստատուտը՝ պատճառաբանելով, որ դա նրանց թույլ կտա դատարանում հայցեր ներկայացնել Բաքվի ագրեսիայի եւ ռազմական հանցագործությունների դեմ՝ ներառյալ 2021-2022 թվականներին Հայաստանի Հանրապետության տարածք ներխուժումը:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի ղեկավարությամբ տեղի է ունեցել աշխատանքային քննարկում ներքին գործերի նախարարության գործընկերների հետ՝ ներքին գործերի փոխնախարարներ Արմեն Մկրտչյանի եւ Արմեն Ղազարյանի գլխավորությամբ:

Հանդիպմանը քննարկվել են կառավարության կողմից առաջարկվող ոլորտային օրենսդրական նախագծեր, ինչպես նաեւ մի շարք միջազգային համաձայնագրեր: Քննարկման հիմնական մասը վերաբերում էր «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում եւ հարակից օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու նախագծին, որի շրջանակներում կարեւորվել է դրանց ընդունման անհրաժեշտությունը:

Արձագանքելով օրենսդրական նախաձեռնությանը՝ Ազգային ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի կողմից ներկայացվել են հիմնախնդրային հարցեր եւ դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները: Առաջարկվել է օրենսդրական փաթեթի լրամշակմանն ուղղված քննարկումները շարունակել համատեղ ձեւաչափով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԸ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԻ

ՀԱՊԿ անդամ պետությունների խորհրդարանների հանձնաժողովների նախագահների խորհրդակցությանը հայկական կողմը մասնակցություն չի ունենա:

Հիշեցնենք, որ ավելի վաղ հաղորդվել էր, որ ՀԱՊԿ երկրների խորհրդարանների հանձնաժողովների ղեկավարները փետրվարի 7-ին կհանդիպեն Մոսկվայում:

ՎԵՐՍԿՍՎԵԼ Է

Բաքվում վերսկսվել է Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի դեմ դատավարությունը, Նիստի ընթացքում Վարդանյանին «կրկին ներկայացնում են իր իրավունքները», այլ մանրամասներ չեն հաղորդվում:

Դատավարության նախօրեին Վարդանյանը ընտանիքի միջոցով ահազանգել էր իր նկատմամբ ճնշումների մասին, պնդել, որ չի մասնակցել հարցաքննություններին եւ քննիչներին, իր անուն-ազգանունից բացի, այլ բան չի ասել, սակայն իրեն եւ իր փաստաբանին ստիպել են, որպեսզի ստորագրեն չկայացած հարցաքննությունների կեղծ արձանագրությունները:

ՃՇԳՐԻՏ ՏՎՅԱԼՆԵՐ

Ադրբեջանի մարդու իրավունքների պաշտպանը Հայաստանի իշխանություններից պահանջում է տեղեկություններ տրամադրել ավելի քան երեք տասնամյակ առաջ Ղարաբաղյան պատերազմի ընթացքում անհետ կորած ադրբեջանցիների ճակատագրերի մասին:

«Հայաստանը պետք է կատարի միջազգային պայմանագրերով ստանձնած իր պարտավորությունները, որոնց մասնակից է հանդիսանում, չթաքցնի մեր հայրենակիցների ճակատագրերի վերաբերյալ տեղեկությունները եւ ճշգրիտ տվյալներ ներկայացնի սպանվածների հուղարկավորության վայրերի մասին», - հայտարարել է Սաբինա Ալիեւան: Հայաստանը 2020-ից հետո Ադրբեջանին է փոխանցել 44-օրյա պատերազմում զոհված 51 ադրբեջանցիների մարմիններ, ինչպես նաեւ 1990-ականներին զոհված 140 ադրբեջանցիների ոսկորներ: Երեւանում կասկածի տակ են դնում ադրբեջանական կողմի նշած 4 հազար թիվը՝ շեշտելով՝ անհետ կորածների թվի ճշգրտումը երկար գործընթաց է: Հայաստանն իր հերթին շուրջ 1200 անհետ կորած անձի հարց է բարձրացնում:

Պաշտոնական տվյալներով՝ 90-ականների սկզբից անհետ կորած է համարվում 993 հայ: 44-օրյա պատերազմից հետո անհետ կորել է շուրջ 200 հայ զինվոր:

ԿՈՉ Է ԱՐԵԼ ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը փաստացի կոչ է արել դադարեցնել Ռուսաստանի տան աշխատանքը Բաքվում՝ որպես իրավաբանական անձ գրանցված չլինելու պատճառով:

Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարությունն աշխատում է Բաքվում Ռուսաստանի տան հետ կապված իրավիճակը կարգավորելու ուղղությամբ: «Բաքվում գտնվող Ռուսական տունը մեկուկես ամսվա ընթացքում պետք է լքի իր վարձակալած տարածքը, քանի որ սեփականատերը մտադիր է շտապ վաճառել այն», - ասել է Պրիմակովը: Ըստ նրա՝ մեկ այլ տարածքի սեփականատերը, ում հետ բանակցություններ են վարվել, առայժմ «դադար է վերցրել»:

ՌՈՒՍ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ

ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՄԱՐՈՒՄ

Քաֆուն սպառնում է Ռուսաստանի դեմ հայց ներկայացնել միջազգային դատարան՝ անցած դեկտեմբերին Ղազախստանում ադրբեջանական ինքնաթիռի վթարի հարցով, որը 38 մարդու մահվան պատճառ էր դարձել:

Ադրբեջանցի պաշտոնյաներն ու լրատվամիջոցները պնդում են՝ Բաքուն դժգոհ է, որ Ռուսաստանի իշխանությունը մինչ օրս չի ընդունել իր մեղսակցությունը եւ չի կատարել նախագահ Ալիեւի պահանջները՝ չի պատժել մեղավորներին ու չի փոխհատուցել վնասները:

«Ադրբեջանի տրամադրության տակ են «Պանցիր-Ս» տիպի հրթիռի բեկորներ, որով եւ ռուսները հարվածել են ինքնաթիռին», - երեկ, հղում անելով կառավարական աղբյուրներին, հաղորդել է Reuters-ը:

Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Ռասիմ Մուսաբեկովը հայտնել է. «Մենք անգամ գիտենք՝ ով է կրակել, ով է հրաման տվել, ով է սեղմել ձգանը: Եվ ուզում ենք, որ նրանք ասեն՝ այո, պատահարը տեղի է ունեցել կոնկրետ անձանց մեղքով, որոնք պարտավոր էին ժամանակին նախազգուշացնել, որ Գրոզնիի օդանավակայանը փակ է քաղաքացիական ինքնաթիռների համար՝ ուղղորդելով անձնակազմին վայրէջքի փորձ անելու փոխարեն վերադառնալ»:

«Թուրան»-ն իր հերթին փաստում է, որ մարդատար ինքնաթիռի կործանմանը զուգահեռ եւ ոչ պակաս Բաքվին մտահոգում է այլ հանգամանք՝ աղետի օրը ոչ միայն AZAL ավիաընկերության ուղեւորատար ինքնաթիռը, այլեւ Ադրբեջանի նախագահական օդանավն է Ռուսաստանի տարածքում տեխնիկական խնդիրներ ունեցել: Այդ մասին գործակալությունը հաղորդել էր դեռ հունվարին, դրանից հետո ավելի քան մեկ ամիս Ադրբեջանի իշխանությունները չէին հերքում, բայց եւ չէին հաստատում այս մասին հաղորդումները: Երեկ, սակայն, «Թուրան»-ը հաղորդեց, թե «Թվային զարգացման ու տրանսպորտի նախարարությունը փաստացի ընդունել է, որ Իլհամ Ալիեւի պաշտոնական ինքնաթիռը՝ «Բաքու-1»-ը, արտաքին տեխնիկական խոչընդոտների է բախվել դեպի Սանկտ Պետերբուրգ՝ ԱՊՀ գագաթնաժողովի ճանապարհին»:

Այդ օրը պաշտոնապես հաղորդվել էր, որ Իլհամ Ալիեւը Սանկտ Պետերբուրգի ճանապարհից ետ է դարձել Ղազախստանում տեղի ունեցած ողբերգության պատճառով: «Թուրան»-ը, սակայն, հղում անելով Ադրբեջանի կառավարության զեկույցին՝ նշում է. «նախագահական ինքնաթիռն անսպասելի լքել է Ռուսաստանի օդային տարածքն ու վերադարձել Բաքու՝ չնախատեսված ռադիոտեխնիկական խնդիրների պատճառով»:

«Դեկտեմբերի 25-ի իրադարձություններն Ադրբեջանում շահարկումների տեղիք են տվել՝ դրանց ետեւում թաքնված իրական մտադրությունների շուրջ», - գրում է «Թուրան»-ը՝ մանրամասնելով. - «Թեեւ պաշտոնապես որեւէ մեղադրանք Մոսկվային չի առաջադրվել, սակայն GPS համակարգի խափանումները, հատկապես՝ Ռուսաստանի կողմից վերահսկվող օդային տարածքում, մտահոգություններ են առաջ բերել միտումնավոր միջամտության վերաբերյալ: Վերլուծաբանները ենթադրում են, որ այդ միջադեպերը կարող են առավել լայն աշխարհաքաղաքական մանեւրների մաս լինել՝ հատկապես հաշվի առնելով Ադրբեջանի ու Ռուսաստանի միջեւ վերջին լարվածությունը տարածաշրջանային հարցերում»:

Ադրբեջանական APA-ն իր հերթին երեկ հաղորդել էր՝ «Մոսկվան պետք է ընդունի իր մեղքը, հակառակ դեպքում Բաքուն կդիմի հաջորդ քայլերին»: Այսօր արդեն հաղորդվեց՝ պաշտոնական Բաքուն պահանջել է դադարեցնել «Ռուսաստանի տան» գործունեությունը Ադրբեջանում: Արտգործնախարարության խոսնակ Այխան Հաջիզադեի խոսքով՝ այդ մասին պաշտոնական նոտան Մոսկվա է ուղարկվել երեք օր առաջ, դրանում, մասնավորապես, ասվում է. «Նման կազմակերպությունների աշխատանքը Ադրբեջանում կարգավորվում է ազգային օրենսդրությամբ, երկրների միջեւ փոխադարձության սկզբունքով եւ երկկողմ ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա: Մինչդեռ «Ռուսաստանի տունը» չի գրանցվել որպես իրավաբանական անձ, ինչով լրջորեն խախտել է Ադրբեջանի օրենսդրությունը: Ռուսական կողմից ակնկալում ենք համապատասխան միջոցներ այս ուղղությամբ»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԲՈՂՔՈՒՄ ԵՆ

Շիրակի մարզում երեկ կրկին բողոքի ակցիա էր. մսավաճառները եւ մարզի համայնքների բնակիչները կրկին հավաքվել են մարզպետարանի մոտ՝ պահանջելով լուծում տալ սպանդանոցների հարցին: Բանն այն է, որ մսավաճառներից պահանջում են մորթն անել սպանդանոցներում, մինչդեռ մարզում սպանդանոցներ չկան: Արդյունքում՝ արդեն տասնյակ մսավաճառներ տուգանվել են: Մասնակիցների խոսքով՝ բողոքի ակցիային մասնակցում են գրեթե բոլոր համայնքների բնակիչները, քանի որ խնդիրը բոլորին վերաբերում է: Հիշեցնենք որ փետրվարի 3-ին մսավաճառները եւս բողոքի ակցիայի ժամանակ հանդիպել էին մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ռոման Համայակյանի հետ: Նա գյուղացիներին ասել էր, որ կառավարության կողմից ընդունվել է որոշում՝ նախատեսված սպանդանոցների փոխարեն կարող են կառուցել սպանդանոցային կետեր, իսկ սրանք ավելի մատչելի կլինեն գյուղացիների համար:

ՆԱԽԱՐԱՐԸ ՊՆԴՈՒՄ Է

Հայաստանում հարկերը եւ տուրքերը չեն ավելացել: Այս մասին հայտնել է Հայաստանի էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը:

Նրա խոսքով՝ բիզնեսի շահութահարկը կրճատվել է, 780 հազար մարդու վճարած եկամտահարկը 25 տոկոսից իջել է 20-ի (այստեղ նա չի նշել, որ այդ 5 տոկոսը սկսել է գնալ կենսաթոշակային հիմնադրամներին այն բանից հետո, երբ իշխող ուժը չի կատարել խոստումները մինչեւ «թավշյա հեղափոխությունը» եւ պարտադիր կուտակային համակարգի ներդրումը - խմբ):

«Թափանցիկ գործունեություն իրականացնող ընկերությունների համար հարկերը նվազում են», - վստահեցրել է նա:

Պապոյանը համոզմունք է հայտնել, որ այսօր Հայաստանում միջին աշխատավարձը մոտենում է 300 հազար դրամին:

11 ՀՈԳԻ

ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում, որը վերաբերում է նախօրեին Երեւանի քաղաքապետարանում տեղի ունեցած ձերբակալություններին, մեղադրանք է ներկայացվել 11 անձի: Քրեական վարույթն առնչվում է կաշառք տալուն, ստանալուն:

11 մեղադրյալներից 4-ի, այդ թվում՝ քաղաքապետարանի երկու պաշտոնյաների նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություններ են ներկայացվել դատարան, որոնք բոլորն էլ բավարարվել են: Մնացածի նկատմամբ ընտրվել են ազատության հետ չկապված այլ խափանման միջոցներ:

ԱՊՕՐԻՆԻ ԳՈՒՅՔ

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԱՀԱՑԱԾ ԱՆՁԸ

2025 թվականի հունվարի 27-ին՝ Գլխավոր դատախազությունը հայտնել էր, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործով առաջին վճիռը մտավ օրինական ուժի մեջ:

Վճռով Սուրեն Վաչիկի Գաբրիելյանից եւ նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության կբռնագանձվի Երեւան քաղաքի Վարդանանց փողոցում գտնվող 1 բնակարան, Կոտայքի մարզի Առինջ համայնքում գտնվող 1 բնակելի տուն, որոնց ընդհանուր միջին շուկայական արժեքը կազմում է 300 միլիոն 650 հազար դրամ (շուրջ 750 հազար ԱՄՆ դոլար), ինչպես նաեւ 56 միլիոն 667 հազար դրամ (շուրջ 141 հազար ԱՄՆ դոլար) եւ 50 հազար եվրո: Պարզվել էր, որ Սուրեն Գաբրիելյանը գեղանկարիչ է, ու դեռ ավելին՝ նա մահացած է: Հայտնել էինք, որ դեռ տարիներ առաջ իր նկատմամբ իրավապահների կատարած գործընթացների արդյունքում նա հիվանդանոցից փախել էր ու լքել էր Հայաստանը: Վերջինիս կինը՝ Կարինե Ավագյանը, բացառիկ զրույց է ունեցել մեզ հետ ու ներկայացրել է, թե ինչ գույք է պետությունը ցանկանում խլել իրենցից:

-«Դատախազությունը հակակոռուպցիոնի մասով այս հայցը ներկայացրել է՝ հիմնվելով ամուսնուս՝ Սուրեն Գաբրիելյանին առաջադրված փողերի լվացման գործի վրա, որը հարուցվել էր դեռեւս 2013-ի աշնանը:

Այդ գործով նրա մեղավորությունը մինչեւ այժմ ապացուցված չէ: Երբ նրան ձերբակալեցին, նշանակված դատաբժշկական բոլոր փորձաքննությունները ցույց էին տալիս, որ նրա մոտ առկա հիվանդությունների պարագայում նրան չեն կարող կալանավորել, այլ բուժում է անհրաժեշտ արտերկրում. խոսքը մասնավորապես լյարդի փոխպատվաստման մասին է, չհաշված շաքարային դիաբետը, սրտի եւ այլ հիվանդությունները: Սակայն օրենքով սահմանված այդ պահանջը չկատարվեց, եւ նա ստիպած էր մի քանի ամիս հետո փախչել հիվանդանոցից, ուր նրան տեղափոխել էին կալանավայրից: Այնուհետեւ ամուսնուս հաջողվել էր հատել Վրաստանի սահմանը, որտեղ նրան բժշկական օգնություն ցուցաբերեցին, սրտի անվճար ստենտավորում իրականացրին: Հայաստանից պահանջում էին նրան արտահանձնել, սակայն Վրաստանի իրավապահ մարմինները գտան, որ առաջադրված մեղադրանքները անհիմն են, եւ չարտահանձնեցին: Շվեյցարիայում մի ընկերուներ, ով իրեն կանչեց իր մոտ, որպեսզի բուժման հարցերով զբաղվեն եւ իրեն նախապատրաստեն լյարդի փոխպատվաստմանը: Ամուսինս ուկրաինական անձնագրով եւ այլ անուն-ազգանունով էր կարողացել հատել Շվեյցարիայի սահմանը: Այնտեղ նա սկսեց բուժումներ ստանալ, բայց, ցավոք, չհասցրեց փոխպատվաստմանը՝ 2016 թվականի մարտի 29-ին մահացավ Շվեյցարիայում:

Ամուսնուս մահվանից հետո՝ սկսած 2019 թ.-ից, աղջիկս բազմիցս պաշտոնապես դիմել է Հայաստանի իրավապահ մարմիններին՝ քննչական, ԱԱԾ եւ այլն, որպեսզի նրան մահացած ճանաչեն: Ուկրաինական անձնագրի եւ հայկական անձնագրի նկարների փորձաքննություն ենք կատարել, որի արդյունքում պարզվել է, որ երկու նկարներում պատկերված մարդիկ միեւնույն մարդն են, տրամադրել ենք այն հասցեն, որտեղ նա մահացել է, այն հիվանդանոցի անունը, որտեղ բուժվել է: Մեզ անհասկանալի պատճառներով՝ այդպես էլ ոչինչ չարվեց:

Արդեն ասացի, որ հակակոռուպցիոնի այս վարույթը հիմնված է փողերի լվացման գործի վրա: Ամուսինս ոչ պաշտոնյա է եղել, ոչ մեծահարուստ օլիգարխ, սակայն, ինչպես հասկանում եմ, դատախազությունը գտել է մի մարդու, որի հարազատներից, ենթադրաբար, հեշտ կլինի ինչ-որ բան պոկել, քանի որ չենք կարող նախկին ու ներկա պաշտոնյաների նման 5-6 պաշտպան վարձել՝ մեր իրավունքները պաշտպանելու համար: Այստեղ ես ակնհայտ անարդարություն եմ տեսնում, առաջինը այն մասով, որ ոչ դատարանները, ոչ քննչական մարմինները ամուսնուս մահացած չեն ճանաչում, այսինքն՝ այս գործը բացել են մահացած մարդու վրա, նրա մահից հետո: Ամեն անգամ դատարանից ծանուցում է գալիս Սուրեն Գաբրիելյանի անունով, եւ մենք ամեն անգամ դրանք հետ ենք ուղարկում՝ ասելով, որ անձը մահացած է, կարող եք հարցում անել եւ համոզվել: Անցյալ տարի Շվեյցարիայի համապատասխան մահվան բյուրոյից կարողացանք ստանալ մահվան փաստը հաստատող փաստաթուղթ, որը ներկայացրել ենք դատարան եւ քննչական մարմիններին, որպեսզի դրա հիման վրա իրեն ճանաչեն մահացած, սակայն էլի ապարդյուն: Ես արդեն մտածում եմ, որ մի ներքին պայմանավորվածություն կա մարդուն չճանաչել մահացած, չանդրադառնալ այդ հանգամանքին, քանի որ դա իրենց հիմա ձեռնտու չէ: Այս գործով ամուսնուցս պահանջում են իր անունով գրանցված առանձնատուն եւ գումար, որոնց վերաբերյալ ուզում են մենք պարզաբանում տանք: Մենք ասում ենք՝ այդ մարդը մահացած է, եթե համարում եք, որ մահացած չէ, ապա այդ դեպքում իրեն գտեք, թող ներկայանա ինքն անձամբ, պարզաբանում տա իր գումարների ծագման մասին, մենք ինչպե՞ս կարող ենք իր փոխարեն պատասխանել: Նա փակ մարդ էր, իր գործերի մասին միայն ինքը գիտեր: Այդ առանձնատան գնման մասին էլ շատ ուշ ենք իմացել: Այնտեղ մեզնից ոչ ոք գեթ մեկ օր չի բնակվել: Ես անձամբ չեմ այցելել, բայց արված նկարներից տեսնում եմ, որ կիսավեր վիճակում է գտնվում հիմա:

Մեզ համար աբսուրդ է ու անհասկանալի այն, որ այս գործում, որպես պատասխանող, ներգրավել են աղջկաս, եւ ի թիվս այլ պահանջների՝ ցանկանում են առգրավել նաեւ իրենց տունը: Ասում են՝ համարում ենք, որ դա Սուրեն Գաբրիելյանն է գնել, այնինչ դա եղել է հարսանեկան նվեր փեսայիս հարազատների կողմից, ինչի մասին եւս հայտնել ենք դատարանին: Հորեղբայրները գրավոր հավաստել են այդ փաստը: Բնակարանը գնվել է այս իրադարձություններից շատ ավելի վաղ, այսինքն՝ մեկը մյուսի հետ ընդհանրապես կապ չունի: Ինչպես հասկանում ենք, փորձել են որքան հնարավոր է մեծ պահանջ ներկայացնել, որ գոնե ինչ-որ բան վերցնեն»:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱՆՈՆՆԵՐ Է ԽԱԽՏԵԼ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Պարգեւ Եղիազարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ թիվ զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող, կոչումով՝ շարքային, ՀՀ ՊՆ շտաբի պետի N հրամանի համաձայն ընդգրկված լինելով մարտական հերթապահության զորամասի պահպանության տեղամասի թիվ կրակային դիրքում, խախտել է ՀՀ ՊՆ՝ 2023 թվականի մարտի 16-ի հրամանով հաստատված «ՀՀ զինված ուժերում մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն իրականացնելու կանոններ»-ի 34-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները (այն է՝ «մարտական դիրքի անձնակազմին արգելվում է անձնական կարիքների համար ինքնակամ թողնել մարտական դիրքի (հենակետի) տեղաբաշխման վայրը), 2023 թվականի նոյեմբերի 24-ին՝ ժամը 14:00-ից 15:00-ի սահմաններում, հորաքրոջ որդու հարսանիքին մասնակցելու նպատակով, ինքնակամ լքել է մարտական դիրքը եւ 2023 թվականի նոյեմբերի 26-ին՝ ժամը 04:00-ից 05:00-ի սահմաններում, վերադարձել է մարտական դիրք՝ այդ կերպ խախտելով մարտական հերթապահություն կրելու կանոնները, որն էլ հանգեցրել է մարտական հերթապահության կրման բնականոն ընթացքի խաթարմանը, այն է՝ 2023 թվականի նոյեմբերի 24-ին՝ ժամը 14:00-ից 15:00-ի սահմաններից մինչեւ 2023 թվականի նոյեմբերի 26-ը՝ ժամը 04:00-ից 05:00-ն ընկած ժամանակահատվածը, թիվ կրակային դիրքում ծառայությունը 3 զինծառայողի փոխարեն իրականացվել է 2 զինծառայողով:

ԱՊՕՐԻՆԻ ԶԵՆՔԵՐ

Համայնքային ոստիկանության եւ Քրեական ոստիկանության գլխավոր վարչությունների տարածքային ստորաբաժանումների ծառայողներն ամենօրյա ակտիվ բացատրական աշխատանք են իրականացնում ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնման ուղղությամբ: Զենք-զինամթերքի կամավոր հանձնման ուղղությամբ Կումայրիի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքի արդյունքում արձանագրվել են հրացանի, գազային ատրճանակի, փամփշտաշղթայով ձեռքի գնդացրի եւ ռազմամթերքի կամավոր հանձնելու դեպքեր:

Զեռքի գնդացիր եւ ռազմամթերք կամավոր հանձնելու դեպք է գրանցվել նաեւ համայնքային ոստիկանության Թալինի բաժնում: Բացատրական աշխատանք են իրականացրել նաեւ Կոտայքի բաժնի ոստիկանները. արձանագրվել է ողորկափող հրացան, «Կալաշնիկովի» ինքնաձիգ, ատրճանակներ եւ ռազմամթերք կամավոր հանձնելու դեպք: Համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողների իրականացրած միջոցառումների շնորհիվ արձանագրվել է «Կալաշնիկովի» ինքնաձիգներ, ակոսափող հրազեն, որսորդական հրացան, ատրճանակ եւ ռազմամթերք կամավոր հանձնելու դեպք:

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԿՆՈՋ ԳՈՐԾՈՎ

ՆՈՐ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐ ԿԼԻՆԵՆ

Նիկոլ Փաշինյանի կնոջ՝ Աննա Հակոբյանի հետ տեղի ունեցած միջադեպի գործով առաջիկայում նոր մեղադրյալներ կլինեն: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասել է փաստաբան Արայիկ Պաղիկյանը:

Հիշեցնենք, որ ՀՀ քննչական կոմիտեն շուրջ 30 ծանուցում էր ուղարկել 2024 թվականի ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի անմար կրակին մոտենալու ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կնոջ՝ Աննա Հակոբյանի եւ նրա դստեր հետ տեղի ունեցած միջադեպի վկաներին: 30 ծանուցվածների մեծ մասը «Ազգային ժողովրդավարական բեւեռի» անդամներն են, որոնց Քննչական կոմիտեն ամեն օր հրավիրում է հարցաքննության: Իրավապահները շարունակում են փնտրել վարչապետի կնոջ ներկայությամբ Ծիծեռնակաբերդում «դավաճան», «հողատու» բղավողներին, բայց նրանց ձայնը կա՝ իրենք չկան: Հիշեցնենք նաեւ, որ 2024թ. ապրիլի 24-ին՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի անմար կրակին մոտենալու ժամանակ, վարչապետ Նիկոլ Փաշինյանի կնոջ՝ Աննա Հակոբյանի եւ նրա դստեր ներկայությամբ «Ազգային ժողովրդավարական բեւեռի» անդամները բղավել էին՝ «դավաճան», «հողատու»:

Միջադեպից հետո 7 անձ ձերբակալվել էր: Արդյունքում՝ մի խումբ անձանց կողմից առերեւույթ ատելության, խտրականության, անհանդուրժողականության կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսք հնչեցնելու, եւ հաղորդակցային-տեղեկատվական մի քանի միջոցներով տարածելու գործողությունների դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության՝ Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը) նախաձեռնվել է քրեական վարույթ: Այս գործով կա մեկ մեղադրյալ՝ 67-ամյա Տիգրան Դրմեյանը, որը ԱԺԲ անդամ է, ու նրա մասով գործը արդեն դատարանում է:

Էջը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 5-ից 6-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 106 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«ԼՈՒՅՍԸ ԼՈՒՅՍ Է ՈՐՈՆՈՒՄ ԵՎ ՈԳԻՆ՝ ՈԳԻ». ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ

ԱՋՆՎԱԿԱՆ, ՈՎ ՈԳԵՂԵՆ ԿՐԱԿՆԵՐՈՎ Է ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ. ԱՐՄԵՆ ՋԱՔԱՐՅԱՆ

Փետրվարի 2-ը Կոստան Զարյանի ծննդյան օրն է. այս տարի գրողի 140 ամյակն է:



Երբ 2019-ին Մատենադարանին փոխանցվեց Մտածողի ողջ ձեռագրային ժառանգությունը՝ ժառանգների ձեռամբ, այդ առիթով օրվա մամուլում հարցազրույց հրապարակվեց **Քաղաքական դասընթացների Երեւանյան դպրոցի տնօրեն Արմեն Ջաքարյանի** հետ, ում գլխավորած կառույցում Կոստան Զարյանը ոչ միայն ընթերցվող, այլեւ քննարկվող հեղինակ է: Այդպես է բազմաթիվ պատճառներով, բայց նաեւ այն պատճառով, որ, ըստ դպրոցի տնօրենի, հայոց ինքնության մատրիցայում ներկա ոգեղենության ամենագիտակ թարգմաններից Կոստան Զարյանի ստեղծագործությունն իր խորքում միաժամանակ **«դարերի ետեւ պահված կրակը քաղելու»** եւ արդի ու գալիք աշխարհներում **«հսկայության լույսը նվաճելու»** պատգամախոսություն է՝ ուղղված սերունդներին... «ինչը մենք փորձում ենք եւ փորձելու ենք տեղ հասցնել»...

Այս հոբելյանը Կոստան Զարյանի ստեղծագործության, նրա աշխարհատեսության ու հայոց ինքնաճանաչման բնույթների մասին խոսելու եւս մեկ առիթ է, ուստի վերահրապարակում ենք հարցերի այդ շրջանակի վերաբեյալ արձանագրումներ բովանդակող հարցազրույցը՝առանց փոփոխությունների:

-Պարոն Ջաքարյան, օրեր առաջ Մատենադարանից տեղեկացանք, որ Կոստան Զարյանի ժառանգները նրա ձեռագրերն են նվիրել Մատենադարանին: Ընդհանրապես Կոստան Զարյանի փիլիսոփայությունը Հայաստանում այդպես էլ հավուր պատշաճի չի գնահատվել, ո՞վ էր նա, եւ ո՞րն է նրան չճանաչելու պատճառը:

-Ամենասկզբում, մինչ բովանդակությանն անցնելը, կամենում եմ մի անսովոր առաջարկ անել. թեպետ հարցազրույցները սովորաբար բնաբան չեն ունենում, բայց այս դեպքում բացառություն անենք՝ ասելիքի ամենավերեւում դնելով Կոստան Զարյանի իմաստային խտացում բովանդակող արտահայտություններից մեկը, այն է՝ լույսը լույս է որոնում եւ ոգին՝ ոգի ... իր մտածումներում լույսը եւ ոգին առավելապես ներդաշնակության ու կատարելության ուղիները հարթող զորություններ են, որոնց անդրադարձումները Զարյանը մշտապես փորձել է ոչ միայն դարձնել երեւութական ու տեսանելի, այլեւ այդպիսով մեծացնել լուսավոր ոգեղենության կենսատարածքը:

Իսկ հիմա, Ձեր թույլտվությամբ, նախ դիմենք Պարույր Սեւակին, որպեսզի օգնի փնտրել տրված հարցի պատասխանը... ...որ, շատ հաճախ կյանքում մարդու

Եթե իր մեծ բաժինն ունի ժամանակը, ինքը դարը,

Բայց եւ այնպես քիչ չի ազդում նաեւ ընտրած ճանապարհը...

Իր ապրած ժամանակների մեջ իր ընտրության արդյունքն է իր կերպը: Կլինե՞ր Զարյանն այլակերպ, եթե այլ ժամանակում ապրեր... չեմ կարծում... թվում է՝ ոչ: Եվ այդ ոչը փաստարկվող է:

Ժամանակի փաստն այն է, որ հայաստանյան իր վերջին ժամանակի իրականության մեջ նրան սկսել էին հանդուրժել, սակայն պաշտոնական շրջանակների կամոք համեստ տեղ էր վերապահվել Զարյանին... այդ շրջանակի համար, ըստ էության, նա չկար... այդ շրջանակն էլ էր իր ժամանակի մեջ, որն իր կանոններն ուներ ... նա չէր ընդունվում, առավել եւս չէր քարոզվում, նրան գիտեր ու կարելի է ասել անվերապահորեն աշակերտում էր ինտելեկտուալների մի շերտ, բայց նրանք այնքան էլ մեծ հնարավորություններ չունեին գոյացնել Զարյանի համընդհանուր ընկալվածության իրականություն, նույնիսկ, երբ այս կամ այն չափով հնարավորություն կար, որպեսզի նա Հայաստանում դառնա ճանաչված ու ներկայանալի: Հայաստանում նա «էմիգրանտ» էր, ոչ յուրային եւ անգամ ոչ Վարպետ՝ իր ժամանակակիցներ Իսահակյանի ու Սարյանի պես, այլ Մաեստրո: Նա օտար էր...

Սա ժամանակն էր, իր ժամանակի խորապատկերը պայմանավորող ժամանակը, այն պատկերը, որն ունի խորք եւ որի անդինից մեզ է ՄՈՏԵՆՈՒՄ խորունկ մտածողությամբ, խորհրդավորությունները դիտարկող ու ոչ-դյուրին բովանդակությունների շուրջ խորհրդածող մի անհատականություն... ասենք, թե ինչպիսին կլիներ մարդկային հոգեբանությունն այսօր, եթե Կեպլերը, Նյուտոնը կամ Գալիլեյը նյութի մասին մտածելու փոխարեն, փորձեին խորամուխ լինել հոգեբանության մեջ, պեղեին այն, մոտենային մարդու թաքնաթաքուր (սա իր բառն է) խորհուրդների աշխարհը ըմբռնելու, տեսանելու եզրին... Զարյանը շարունակում է մոտենալ, այդ մոտենալու գործընթացն անընդհատական է, այն շարունակվում է մինչ օրս...

Ու որքան էլ անկասելի է այդ ընթացքը, թվում է, թե նա երբեք էլ մինչեւ վերջ չի մոտենալու, որովհետեւ գործ ունենք կերպի փաստի հետ: Իսկ կերպի փաստն այն է, որ եթե առավելապես իր ժամանակն էր իր կերպը մերժում, ապա ինքը մերժում էր նաեւ այն ժամանակը, որ գալու էր իր ժամանակից հետո ... «փող, փող ... ահա մի լեզու, որ անհասկանալի է Դոն Կիխոտին եւ անհասկանալի է Սասունցի Դավթին»... անհաշտություն, որը ձեւակերպվել էր դեռեւս իր ժամանակում «պետք չէ զարմանալ, երբ հայ վաճառականները եւ արտասահմանյան հարուստները իրենց ծարավ աչքերը հառում են համակրանքով դեպի համայնավարությունը»... համայնավարներին, որոնք բուրժուական դրամատիրական մտքի ծայրահեղ ներկայացուցիչներն են ...

Նա, որ հառնում է իր բացառիկությամբ, ինքն իրեն հայաստանյան միջավայրում գրեթե միշտ, եթե ոչ օտար, ապա միայնակ էր զգում. այդպես էր զգում էությամբ ազնվականը, խորաթափանց այրը, արմատների ոգեղենությունը պեղողն ու հայոց առաքելության իմաստը փնտրողը ... այդ միայնությունն ըստ էության չի ավարտվում... հաջորդած տասնամյակներում էլ շատ բան չի փոխվե. ուստի նրա խոսքն ու կերպը դեռ ու դեռեւս ընկալելի կլինեն խիստ սահմանափակ տիրույթում, նա մեզանում երեւի երբեք բոլորինը չի դառնա, կմնա «առանձնյակ», որը, սակայն, պիտի գիտենանք, որ իր մենության տարածքից դուրս, իր ժամանակի մտքի ու մշակույթի արքաների միջավայրում միանգամայն այլ համարում ուներ՝ խորհուրդներ էր տալիս նրանց՝ վերջինների խնդրանքով՝ Պիկասոյին, Ունամունոյին, Ռեսպիգիին, այլոց...

Իտալիայում նրան օտարները տասնամյակներ առաջ արդեն հրատարակել էին «Աշխարհի ընտիր գրողները» մատենաշարով: Ֆլորենցիայում միջնադարյան դղյակ էին նվիրել: Գնահատում էին նրան, նրա միտքը, խոսքը... Ու թող թույլ տրվի ասել, որ նա, որպես գրականության մարդ, որպես մտածող ձեւավորվել է ոչ այնքան հայկական միջավայրներում, ժամանակի փոթորկվող աշխարհի որոշումների հետեւանքներն ուղղակիորեն կամ կողմնակիորեն այս կամ այն չափով կրող մեր երկրում, որքան այնտեղ՝ այն բոհեմներում, որոնցում ներկա էին նաեւ *դեմ* կամ *կողմ* կարծիքով որոշումների կայացմանը մասնակցողները: Այդ պատճառով է, որ նրա աշխարհատեսությունն ավելի լայնահուն է, իսկ աշխարհաճանաչողությունը՝ մի այլ մակարդակում: Այդ բարձունքում է առարկայանում ինքնագնահատականը. Զարյանը գնահատում է այն, ինչ որ ուներ իր ժողովուրդը, ինքը՝ որպես հայկական ինքնություն: Ինքնաճանաչումը, որն իրագործվում է հայոց արմատների ոգեղեն բովանդակությանը հաղորդվելով, ձեւակերպում է այն մտայնությունն ու ջանքը, որ պետք է, պետք է բացել էության խորքերը, ցուցանել դրանք, դարձնել հանուրինը եւ որպես քաղաքակրթական ինքնուրույնություն՝ երկխոսել ամենքի հետ ... գնահատել այլոցը, ներկայացնել սեփականը: Այս վերջին արձանագրումը կատարելուց հետո՝ Զարյանի կերպի պատկերն ամբողջացնելու համար, ուզենանք, թե ոչ, պետք է ավելացնենք վերապահական իմաստներ ունեցող բազմաթիվ բառեր. բայց, սակայն, այնուամենայնիվ, այդուհանդերձ, դրանով եւ ոչ միայն դրանով հանդերձ, իր ժամանակի մտքի արքաներին խորհուրդներ տվող, իմաստներ բանաձեւող այս անհատականությունը սփյուռքում էլ էր օտար, օտար՝ մերայինների մեջ.... ցավոք, այս համադրություններով, ՄԵՆԱԿԻ էությամբ է ամբողջանում իր կերպի ընդհանրական համատեքստը:

Ուստի, ընկալված ու ապրված են օտար լինելու եւ մենակության վերաբերյալ իր խորհրդածությունները՝ ասված սեփական հերոսների բերանով, թե «շատ անգամ ինձ օտար եմ զգում: Օտար՝ արտաքին, դրսի կյանքին: Այն չէ, որ սպասում էի, այն չէ: Պատճառն այն է, որ երբ մարդն իր միջավայրից հեռու է ապրում, ամեն ինչ ուրիշ կերպ է տեսնում...»: Սակայն մի բան է օտար լինելու զգացողությունը, մեկ այլ բան՝ մենակության ընկալումը: Օտար է դրսի, արտաքին կյանքի հարահոսը, իսկ մենակությունը, որն արժեքների, դրանց որոնման ու իմաստավորման շուրջ ինքազրույցով է դրսեւորվում, ավելի լուսավոր է «այն, ինչ դու անվանում ես մենակություն՝ինքը կյանքն է: Մենք մենակ չենք, մենք մենակություն ենք: Իսկ մենակությունն ամբողջություն է... վայ այն մարդուն, որ վախենում է դժվարություններից: Միայն դժվարության բովից անցնելով կարելի է հասնել ներքին հարստության, ներքին անկախության: Սերը վերջին եւ կատարյալ մենակությունն է....այն էության էությունն է եւ գոյանալու համար պետք ունի երկու մենակությունների»... սերը, մենակությունը, էության էությունն... այդ է պատճառը, որ իր մասին ասում է, որքան էլ մենակ, սակայն երբեք չեմ ձանձրացել...

Ու, գիտեք, Մատենադարանին հանձնված նրա ժառանգությունը, չգիտեմ ինչու, թվում է՝ գալիս է ընդգծելու նրա այլեւս հավերժ մենության հանգամանքը: Մի կողմից, անշուշտ, ձեռագրերի փոխանցումը Մատենադարանին ուրախացնում է, որ Զարյանի ժառանգության անտիպ հատվածն էլ այլեւս կարող է հասանելի դառնալ: Սակայն մյուս կողմից, մտավախություն ունեմ, որ այսպիսով, կարծես թե, որքան տեղյակ եմ Իտալիայում բնակվող ժառանգները ակամա, չուզենալով, ենթագիտակցաբար նախապատրաստվում են գուցե թե դեռեւս հեռավոր այն իրավիճակին, որ կարող է ընդհատվել Հայաստանի հետ իրենց կապը, ուստի որոշել են այդ հարստությունը տալ նրանց, ովքեր, համոզված են, եղածն ըստ նշանակության կպահեն: Տա Աստված, որ մտավախությանս մեջ սխալված լինեմ, բայց քանի որ տեղյակ եմ, ասենք, Կոմիտասի ազգականների պատմությանը, ուստի չեմ կարող աչքաթող անել ժառանգավորաց փորձը մեծաց:

-Մենք հաճախ ենք դժգոհում, որ, ինչ-որ մի դարաշրջանից սկսած, Հայաստանի եւ մեր ազգի փիլիսոփայությունն ընդհատվել ու բացառությամբ որոշակի փորձերի՝չի վերականգնվել, ինչն էլ այսօր մեզ պակասում է եւ չգիտենք՝ուր ենք գնում եւ ինչ ծրագրով: Համաձա՞յն եք այդ մտքին եւ այս առումով ի՞նչ դեր ուներ Զարյանը:

-Ձեր հարցադրումը բազմաշերտ է, եւ քիչ թե շատ ամբողջական պատասխանը շատ ծավալուն անդրադարձ է ենթադրում, բայց եթե անդրադառնանք սոսկ այն հատվածով, որը Զարյանի դերին է վերաբերում, ապա ափսոսանքով պիտի արձանագրենք, որ Զարյանը դեռ դեր չի ունեցել, իսկ այն, ինչ տեղի է ունեցել վերջին տասնամյակներին, ընդամենը ծանուցում է: Ծանուցում, որ նա՝Մեծը, եղել է: Գնահատանքի են արժանի նրանք, ովքեր արել են դա եւ ձգտել են անել ավելին, սակայն հասարակությունը Զարյանին դեռեւս ընկալել ու տիրացել է այնքանով, որքանով... ընդամենը մի քանի տասնյակ մարդ է, որ այս կամ այն չափով թափանցել է այն խորությունների մեջ, որ ձեւակերպել է Մեծը: Իսկ այդ խորություններից արձագանքում է մի գրեթե կշտամբական արձանագրում, որ մենք ընդամենը պատմության մակերեւույթն ենք տեսնում, մակերեսի վրա եղածը, եւ աշխարհի մասին էլ սոսկ պատմական կամ մշակութային անցքերով ենք դատում: Մինչդեռ անհանգիստ ոգիների հետ հմայիչ ու վտանգավոր հաղորդակցության մեջ մտնելն է, որ զորություններին, մարդկային գիտակցության առջեւ լիովին չմերկացած ներկայություններին այս կամ այն չափով մոտենալու, զտահոս կենսունակությունը ճանաչելու հնարավորություն է բացում. ընկալել դրանք՝ դրանց հետ չափվել է նշանակում ... իր չափումներն այդ տիրույթում են ... ցավոք, չկա, չգիտեմ մարդկանց այն թեկուզեւ փոքրիկ շրջանակը, մեզանում, այսօր, ում մտածումն այսօրինակ հարցերի վրա է կենտրոնացած բովանդակային փնտրտուքի առումով....

Շարունակությունը՝ ⇨ էջ 7

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար. 2 մարդ զոհվել է, 11-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ՖԱՍԹ» ԲԱՆԿ

ԹՈՂԱՐԿԵԼ Է ՊՐԵՄԻՈՒՄ ԴԱՍԻ ՔԱՐՏԵՐ

«Ֆասթ» բանկի հաճախորդներին այսուհետեւ հասանելի են միջազգային Mastercard վճարահաշվարկային համակարգի պրեմիում դասի World եւ World Elite բանկային քարտերը, որոնք քարտապաններին լայն հնարավորություններ են ընձեռում ոչ միայն Հայաստանում, այլեւ արտերկրում:

World եւ World Elite տեսակի քարտերն ունեն մի շարք առավելություններ. քարտապաններն օդանավակայաններում կարող են օգտվել հատուկ գոտիների ուղիներից՝ շրջանցելով կանոնավոր հերթերը Երեւանում, Դուբայում եւ աշխարհի ավելի քան 100 օդանավակայաններում (World-ի քարտապանները՝ 6 անգամ, World Elite-ի քարտապանները՝ անսահմանափակ): World Mastercard-ի քարտապանների հյուրերը նույնպես կարող են օգտվել այդ ծառայությունից:

Աշխարհի ավելի քան 1500 օդանավակայանների սպասասրահները պատրաստ են ընդունել Mastercard-ի քարտապաններին՝ ավելի հարմարավետ դարձնելով նրանց ճանապարհորդությունը: Ի դեպ, Word Elite-ի քարտապանների համար հասանելի է ճանապարհորդական ամբողջական ապահովագրություն:

Քարտապանները հնարավորություն ունեն ճանապարհորդելիս կապի մեջ մնալ առանց SIM քարտի՝ միանալով Global Data Roaming-ին 15% զեղչով մինչեւ 3 ԳԲ (1 ԳԲ՝ World քարտապանների համար) անվճար ինտերնետով:

Mastercard վճարահաշվարկային համակարգն ունի 800+ առաջարկներ՝ զեղչերի, նվերների տեսքով, սրճարաններից օգտվելու հնարավորություն աշխարհի 650 օդանավակայաններում: Ի լրումն սրան, գործում է Mastercard ճանապարհորդական պարգեւատրման ծրագիրը, ըստ որի՝ քարտապանները դրամական պարգեւներ (cashback) են ստանում գնումներ կատարելիս: Հարկավոր է ընդամենը գրանցվել Mastercard-ի պաշտոնական կայքէջում եւ տեսնել ընձեռվող հնարավորությունները: Գործում է նաեւ Priceless.com-ի փորձառությունների հարթակը:

Հավելենք, որ վերոհիշյալ պայմանների մանրամասները ճշտելու կամ ծառայություններն ակտիվացնելու համար քարտապանները ցանկացած պահի՝ 24/7 ռեժիմով, կարող են կապ հաստատել իրենց անձնական օգնականի հետ՝ պարզապես զանգահարելով կամ կապ հաստատելով WhatsApp, Viber եւ Telegram սոցիալական ցանցերի միջոցով: Միջազգային անձնական օգնականի ծառայությունը ներառում է ոչ միայն հարցուպատասխանի ծառայություն, այլեւ պատրաստ է կատարել ցանկացած առաջադրանք՝ ճամփորդությունների կամ միջոցառումների տոմսերի ամրագրումներ, նվերների առաքումների կազմակերպում, խորհրդատվություն եւ այլն: Անձնական օգնականի ծառայությունը գործում է անգլերեն լեզվով: «Ֆասթ» բանկի պրեմիում դասի World եւ World Elite քարտերը հնարավոր է ձեռք բերել ինչպես շուրջօրյա աշխատող բանկի մասնաճյուղերում, այնպես էլ «Ֆասթ» բանկի հավելվածի միջոցով:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում: «Ֆասթ» բրենդը նախորդ տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

ՆԱԽԱԳԻԾՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Կառավարությունը հավանություն է տվել ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացմանը եւ ոլորտում մասնագիտական զարգացման ու վարձատրության խրախուսման արդյունավետության բարձրացմանն ուղղված փոփոխությունների նախագծին, որը վերաբերում է ուսուցիչների տարակարգի տրամադրման բաղադրիչին:



Հարցի զեկուցող, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, ներկայացնելով որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը, նշել է, որ Կառավարության ծրագրի եւ կրթության մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագրի կարեւոր առանձնահատկություններից է ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացումը եւ ոլորտում մասնագիտական զարգացման եւ վարձատրության խրախուսման արդյունավետ գործիքների ներդրումը:

«Միայն 2024 թվականին, բացի ուսուցիչների աշխատավարձից, պետական բյուջեի շրջանակներում գործել է 4 տարբեր ծրագիր, որոնցից մեկը կամավոր ատեստավորումն է, եւ պետք է ուրախությամբ նշեմ, որ 4 տարվա կամավոր ատեստավորման արդյունքում մենք արդեն ունենք 6100-ից ավելի ուսուցիչներ կամ մեր ուսուցիչների շուրջ 20 տոկոսը, որոնք օգտվել են ծրագրից եւ արդեն իսկ ստանում են բարձր աշխատավարձ: Կարեւոր է, որ այս ծրագրի շրջանակներում նաեւ 2023-2024 թվականների ընթացքում բարձրագույն կրթություն չունեցող 614 ուսուցիչ, հաղթահարելով կամավոր ատեստավորման անցողիկ շեմը, հնարավորություն են ստացել շարունակել իրենց աշխատանքը: Պետք է հիշեցնեմ, որ Կառավարության հաստատած օժանդակության ծրագրով այժմ 49 ուսուցիչ պետական միջոցներով բարձրագույն կրթություն է ստանում», - ասել է նախախարը:

Վերջինիս խոսքով՝ այս ուղղությամբ ՀՀ կառավարության հաջորդ կարեւոր ծրագիրը տարակարգի ծրագիրն է. «Նախորդ տարի 285 ուսուցիչ ստացել է տարակարգ՝ նախորդ տարվա ցուցանիշը լավարկելով շուրջ 2,8 անգամ եւ արդյունքում նաեւ լրացնելով իր վարձատրությունը եւս 10-50 տոկոս հավելավճարով: Ներկայում տարակարգ ստացող շուրջ 1263 ուսուցիչ ունենք»:

Նախարարը շեշտել է, որ ուսուցիչների մասնագիտության գրավչությանն ուղղված Կառավարության մյուս ծրագիրը բնագիտական առարկաների եւ SS ոլորտի ուսուցիչների համար 25 տոկոսի հավելավճարի ծրագիրն է, որի շահառու է 8200 ուսուցիչ եւ այդ ուսուցիչները, անկախ իրենց վարձատրության մյուս միջոցներից, ստանում են 25 տոկոս հավելավճար: «Այս համալիր քաղաքականության արդյունքում 2023-2024 թվականների ուսումնական տարում դպրոցներ են մուտք գործել շուրջ 3300 նոր ուսուցիչներ, ինչը ցույց է տալիս, որ ուսուցչի մասնագիտական գրավչությանն ուղղված մեր ծրագրերն աշխատում են»,- նկատեց Անդրեասյանը՝ կարեւորելով այն հանգամանքը, որ այս ուսուցիչների շուրջ 56 տոկոսը գյուղական դպրոցներում է:

Ժաննա Անդրեասյանի բնորոշմամբ՝ այս տրամաբանությամբ են նաեւ առաջարկվում այս նախագծով նախատեսված փոփոխությունները տարակարգի մեխանիզմում:

«Մեզ համար կարեւորագույն առաջնահերթություն է թվայնացումը, եւ մենք նաեւ այս ուղղությամբ քայլեր իրականացնելով՝ նախատեսում ենք, որ առաջիկայում տարակարգի փաստաթղթերը կընդունենք միայն էլեկտրոնային եղանակով, որը կարեւոր է ինչպես ռեսուրսի խնայողության տեսանկյունից, այնպես էլ կրթության կառավարման տեսանկյունից»,- ասաց նախարարը:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ Գ

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

2025 թվականի հունվարի 29-ի որոշմամբ՝ ՀՀ կենտրոնական բանկը տրամադրել է նախնական հավանություն «Արդշինբանկ» ՓԲԸ եւ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ միացման պայմանագրի կնքմանը: Նշված պայմանագրի կնքման արդյունքում «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն կմիանա «Արդշինբանկ» ՓԲԸ-ին, միեւնույն ժամանակ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի՝ որպես առանձին իրավաբանական անձի գործունեությունը կդադարի, եւ վերջինիս բոլոր իրավունքներն ու պարտականությունները կփոխանցվեն պահպանվող իրավահաջորդ բանկին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ին: Պահպանվող բանկը շուկայում կշարունակի գործել «Արդշինբանկ» անվանման ներքո:

«Արդշինբանկ» ՓԲԸ-ի եւ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի հաճախորդները շարունակելու են սպասարկվել բնականոն կերպով՝ կնքված պայմանագրերի շրջանակներում, որոնք կարող են լուծվել հաճախորդների նախաձեռնությամբ՝ պայմանագրերով նախատեսված կարգով եւ ժամկետներում:

Միացման արդյունքում «Արդշինբանկ» ՓԲԸ-ի ընդհանուր կապիտալը կկազմի մոտ 323.0 միլիարդ ՀՀ դրամ, ակտիվները կհասնեն մոտ 2,307.2 միլիարդ ՀՀ դրամի, իսկ սպասարկման ցանցը բաղկացած կլինի գլխամասային գրասենյակից եւ 70 մասնաճյուղից: Բանկերի միացումը թույլ կտա ձեւավորել միջազգային ստանդարտներին համապատասխանող, տնտեսական ավելի մեծ ներուժ եւ հնարավորություններ, միջազգային մակարդակում գրավչություն եւ դերակատարում ունեցող, հաճախորդների իրավունքներն առավելագույնս երաշխավորող համակարգային նշանակության բանկ:

Այս փուլում «Արդշինբանկ» ՓԲԸ-ի (գործունեության վայրը՝ քաղաք Երեւան, Գ.Լուսավորչի փ., շ. 13 եւ 13/1, հեռախոսահամար՝ +374 12 222222, էլեկտրոնային հասցե՝ ashb@ardshinbank.am) եւ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի (գործունեության վայրը՝ քաղաք Երեւան, Պարոնյան փող., 42 շ., տարածք 90, հեռախոսահամար՝ +374 60 655000, էլեկտրոնային հասցե՝ office@ardshininvestbank.am) բոլոր մասնաճյուղերի գործունեության վայրերը եւ հաղորդակցման միջոցները անփոփոխ են եւ հասանելի են բանկերի պաշտոնական կայքէջերում՝ համապատասխանաբար www.ardshinbank.am եւ www.ardshininvestbank.am:

«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

2025 թվականի հունվարի 29-ի որոշմամբ՝ ՀՀ կենտրոնական բանկը տրամադրել է նախնական հավանություն «Արդշինբանկ» ՓԲԸ եւ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ միացման պայմանագրի կնքմանը: Նշված պայմանագրի կնքման արդյունքում «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն կմիանա «Արդշինբանկ» ՓԲԸ-ին, միեւնույն ժամանակ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի՝ որպես առանձին իրավաբանական անձի գործունեությունը կդադարի, եւ վերջինիս բոլոր իրավունքներն ու պարտականությունները կփոխանցվեն պահպանվող իրավահաջորդ բանկին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ին: Պահպանվող բանկը շուկայում կշարունակի գործել «Արդշինբանկ» անվանման ներքո:

«Արդշինբանկ» ՓԲԸ-ի եւ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի հաճախորդները շարունակելու են սպասարկվել բնականոն կերպով՝ կնքված պայմանագրերի շրջանակներում, որոնք կարող են լուծվել հաճախորդների նախաձեռնությամբ՝ պայմանագրերով նախատեսված կարգով եւ ժամկետներում:

Միացման արդյունքում «Արդշինբանկ» ՓԲԸ-ի ընդհանուր կապիտալը կկազմի մոտ 323.0 միլիարդ ՀՀ դրամ, ակտիվները կհասնեն մոտ 2,307.2 միլիարդ ՀՀ դրամի, իսկ սպասարկման ցանցը բաղկացած կլինի գլխամասային գրասենյակից եւ 70 մասնաճյուղից: Բանկերի միացումը թույլ կտա ձեւավորել միջազգային ստանդարտներին համապատասխանող, տնտեսական ավելի մեծ ներուժ եւ հնարավորություններ, միջազգային մակարդակում գրավչություն եւ դերակատարում ունեցող, հաճախորդների իրավունքներն առավելագույնս երաշխավորող համակարգային նշանակության բանկ:

Այս փուլում «Արդշինբանկ» ՓԲԸ-ի (գործունեության վայրը՝ քաղաք Երեւան, Գ.Լուսավորչի փ., շ. 13 եւ 13/1, հեռախոսահամար՝ +374 12 222222, էլեկտրոնային հասցե՝ ashb@ardshinbank.am) եւ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի (գործունեության վայրը՝ քաղաք Երեւան, Պարոնյան փող., 42 շ., տարածք 90, հեռախոսահամար՝ +374 60 655000, էլեկտրոնային հասցե՝ office@ardshininvestbank.am) բոլոր մասնաճյուղերի գործունեության վայրերը եւ հաղորդակցման միջոցները անփոփոխ են եւ հասանելի են բանկերի պաշտոնական կայքէջերում՝ համապատասխանաբար www.ardshinbank.am եւ www.ardshininvestbank.am:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ԼԵՌՆԱԴԱՀՈՒԿԻ, ՍՆՈՈՒԲՈՐԴԻ ՀՈԿԵՅԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

Համահայկական ձմեռային երկրորդ խաղերում հայտնի են լեռնադահուկի, սնոուբորդի եւ հոկեյի մրցումների հաղթողները: Լեռնադահուկի հսկա ոլորավայրէջք մրցաձեւում ոսկե մեդալը նվաճել է Երեւանը ներկայացնող Գլեբ Մոսեսովը: Տղամարդկանց պայքարում արծաթե մեդալին արժանացել է երեւանցի Աշոտ Կարապետյանը, լավագույն եռյակը եզրափակել է դարձյալ Երեւանի թիմից Մարկ Ստեփանյանը:

Կանանց պայքարում առաջին երկու տեղերը զբաղեցրել են Ծաղկաձորի ներկայացուցիչներ Արուս Եղիզարյանն ու Անի Մանուկյանը: Լավագույն եռյակը եզրափակել է Ալեքսանդրա Մալխասյանը Սոչիից: Կայացել է նաեւ սնոուբորդի հսկա ոլորավայրէջք մրցաձեւի մրցաշարը, որին ընդհանուր առմամբ մասնակցել է 20 տղա եւ երկու աղջիկ:

Տղամարդկանց պայքարում հաղթողի կոչմանն արժանացել է Նորիկ Թադեւոսյանը, երկրորդ տեղը զբաղեցրել է Կարեն Սաֆարյանը Ծաղկաձորից, իսկ լավագույն եռյակը եզրափակել է Կարեն Միրզոյանը Վանաձորից: Կանանց պայքարում ոսկե մեդալը նվաճել է Լիլիթ Պետրոսյանը Մոսկվայից, իսկ երկրորդ տեղը զբաղեցրել է Հասմիկ Մելիքյանը Երեւանից:

Համահայկական ձմեռային խաղերի լեռնադահուկային սպորտի եւ սնոուբորդի մրցումներին ընդհանուր առմամբ 70 մարզիկ է մասնակցել Լիբանանից, Ֆրանսիայից, Իրանից, Ռուսաստանից ու Հայաստանից:

Համահայկական խաղերի ծրագրով անցկացվող հոկեյի մրցումներում եւս հաղթողները հայտնի են: Չեմպիոնի կոչմանն արժանացել է Դոնի Նախիջեւանի թիմը, որը վերջին՝ երրորդ խաղում 10:6 հաշվով առավելության է հասել Մոնրեալի թիմի նկատմամբ: Երկրորդ տեղը զբաղեցրել է Երեւանի թիմը, որը վերջին խաղում 10:5 հաշվով հաղթել է Վոլգոգրադի թիմին: Վերջինս բավարարվել է բրոնզե մեդալով:

Համահայկական ձմեռային երկրորդ խաղերն անցկացվում են հոկեյ, դահուկավազք, լեռնադահուկային սպորտ, սնոուբորդ, շախմատ, ձնամարտ եւ սպորտային պարեր մարզաձեւերից: Երկրորդ անգամ անցկացվող խաղերին ավելի քան 1340 պատվիրակ է մասնակցում աշխարհի 18 պետությունների 88 քաղաքներից: Համահայկական խաղերը սպասարկում են 76 մրցավարներ:

ԿՈՍՏԱՆ ՋԱՐՅԱՆ. ԱՋՆՎԱԿԱՆ, ՈՎ ՈԳԵՂԵՆ ԿՐԱԿՆԵՐՈՎ Է ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ

5 ⇨ Կկարողանամ՞ մարդը դա անել, այդ չափման մեջ տեղավորվել, հարցնում է Զարյանը ու ձեւակերպում իր կենսափիլիսոփայության ամենածանրակշիռ բանաձեւումներից մեկը հայության համար «մեզ վիճակված է ապրել բարձրավանդակի վրա: Մեր դաշտերը եւ մեր լճերը մագլցում են դեպի լեռը»: Այսինքն՝ պիտի լինել բարձրում, որպես քաղաքակրթական ինքնուրույնություն՝ նվաճել լույսը հսկայության: Նրա այս՝ Արարատյան մարդու մտածողության արմատավորումը պատգամ է, որ եթե չընկալվի, ապա «վայ մեզ, եթե վար իջնենք. կընկնենք արդի քաղաքակրթության ծխնելուղի տակ, մեքենայի մաս կդառնանք կամ խանութպան»: Իսկ որպեսզի դա չլինի, պիտի «քաջությունը ունենանք խորհելու եւ նաեւ քաջությունը ունենանք համարձակելու:

Մեծ մշակույթներն առաջ են եկել միշտ էլ հակառակ առարկայական, հակառակ տնտեսական եւ քաղաքական պայմաններին: Մշակույթը, եթե ուզում եք, հոգեկան արկածախնդրություն է. վսեմ մի խենդություն, որով տիեզերքը գալիս գտնում է իր իմաստը: Մշակույթը պահանջում է մեծ ճիգ, հավատք եւ զոհաբերություն՝ առաքինություններ, որով հայ ժողովուրդը լիովին օժտված է»:

Այլապես, «եթե մենք՝ հայերս, կուրորեն ենթարկվենք ներկա քաղաքական պայմաններին, մեզ վիճակված է ռուսական ապագա հսկա տնտեսական կազմակերպության մեջ չնչին արտադրողի դիմազուրկ եւ աղքատիկ վիճակ»:

Մինչդեռ «ապրել, նշանակում է ճակատագրականապես ստիպված լինել բանակցել մեր ազատությունը»:

Զարյանը համոզված է, որ մշակույթը խորություն է եւ ոչ տարածություն, ուստի այդ խորություններում է, արմատներում է որոնում այն լույսը, որով «Արարատի աստվածաշնչական ոգին պատրաստ է ճառագայթելու իր թաքնված ստեղծագործական թափը, մոտեցնելով ժամանակը, երբ վերջապես հայ ժողովուրդը պիտի գտնե ինքն իրեն: Լինի այն, ինչ որ է: Կատարի իր դերը, ասի իր խոսքը»:

Այդ ճանապարհը լուսավորող, զորություններին ծնունդ տվող ոգեղեն լույսը, Զարյանի համոզմամբ, որը հսկա սերմի նման պայթելու է, ոչ թե առկա է, այլ ներկա է, գործուն ներկայություն է Հայաստանում. «կան երկրներ, որ պատկանում են Սրբազան աշխարհագրության, ուր ամեն մի բնական երեւույթ պատճառաբանված է հոգեկանով եւ որտեղ կան կարելիություններ»: Իսկ որպեսզի առարկայանան այդ կարելիությունները, նա պեղում է արմատները, ձեւակերպում «տիրող քաոսի խավարում մեր ուզած լույսը վառելու կամքը», որն այսպես կոչվող «առարկայական պայմաններ» է խորտակում եւ փոխում «դեպքերի դասավորության» ընթացքը... Զարյանը քայլում է Հայկ Դյուցազնի հետ, քայլում է նրա հետագծով, տիեզերքը դիտարկում որպես Հայկի եւ նրա ժառանգների կեցության մի առանձին աշխարհ: Աստղաշխարհ է այդ անպարագիծ հաղորդակցության տիրույթի՝ տիեզերք-աշխարհի անունը, ուր խորհուրդներ են առնվում ոչ միայն լույսից, այլեւ մութից, ներսից լուսավորվող մութից՝ աստղամութից՝ որպես լուսեղեն ճանապարհի փարոսներ ու աստեղային ընթացքի պատգամներ: Անընդհատական է հաղորդակցությունը մյուս աստղերի հետ եւ Աստղաշխարհին է վերապահված հուշել, թե որտեղ պիտի հաստատվի Հայկը, Հայկի շենը, որպեսզի սրբազնագործվի հետագայում Հայաստան կոչվելիք երկիրը: Ոգու պատգամախոս է Զարյանը եւ Հայկ Դյուցազնի հետ քայլելով ոգեղեն ցուցման արձանագրումներ կատարելը զարյանական էության դրսեւորման օրինակներից մեկն է ընդամենը:

Հնարավոր չէ մեկ հարցազրույցի մեջ անդրադառնալ Զարյանի բազմաշերտ մտքի արձանագրումների անգամ մի փոքր մասին ... եւ դա ցավոք... ցավոք նաեւ այն պատճառով, որ քիչ ընկալված Զարյանը դեռ երկար ժամանակ կառանձնանա որպես այն բացառիկ ազնվականը, որի հեռահայաց մտածողության ձեւակերպած իմաստները պահանջարկված կլինեն ոչ այն չափով, որպեսզի կարողանանք ասել՝ .... նպատակ ունենք չափվել մեր այսօրվա կերպից ավելի զորեղ լինելու մեր կամքի հետ ... մինչդեռ, դա հնարավոր է...

-Առհասարակ ո՞վ կամ ո՞ր մարմինը պետք է լինի նոր սերնդին իր արժեքներին ինտենսիվ ու հետեւողական ծանոթացնողը: Ինչե՞ս եք պատկերացնում արժեհամակարգ սերմանող այս գործընթացը եւ մեկնարկը ինչպե՞ս պետք է տալ:

- Որ հայությունն իրոք ունի ամբողջական ինքնաճանաչման ու աշխարհաճանաչման խնդիր, դրանում կասկած չկա, սակայն դա պահանջում է հստակ, նորովի, արդիական ռազմավարական բնույթի մոտեցումներ: Ֆրագմենտալ գիտելիքի, սահմանափակ տեղեկույթի, շատ հաճախ նաեւ չնչին ու ճղճիմ նպատակների հիմքի վրա կառուցված գործունեությունն անհեռանկար, իսկ երբեմն ողբերգական արդյունքների է բերել: Ընդունվել են անհեռատես, կիսատ-պռատ որոշումներ ու չի դրսեւորվել լավագույն վճիռներ առնելու նպատակով կոմունիկատիվ բանականության մեխանիզմներ գործի դնելու որեւէ ջանք:

Իսկ որպեսզի Ձեր հարցադրման, բազմաթիվ այլ էական հարցերի եւ առհասարակ, Հայաստանի հաստատուն ապագայի վերաբերյալ ռեալ պատկերացումներ ձեւավորվեն, ապա Հայաստանի պետությունը եւ սփյուռքի այն հատվածը, որը ոչ թե եւ ոչ միայն «ինքզինքը կսիրե եւ Արարատին հետ նկարվիլ», այլ արդի իրողությունների ու գալիք անորոշությունների ծավալի ու խորության գիտակցությամբ է նայում դրսեւորվելիք մարտահրավերներին ու հնարավորություններին, պետք է միասնական քննարկումների արդյունքում հասնեն այն եզրագիծին, որտեղ հստակություններ կառարկայանան ֆորմատների ու մեխանիզմների վերաբերյալ, թե ինչպես ինվենտարիզացիայի ենթարկել ու շարժման մեջ դնել հայության ստրատեգիական խելքը թե՛ երկարաժամկետ պլանավորումների, եւ թե՛ արագ արձագանքումների առումով (հարկ եղած դեպքերում ներգրավելով հայկական ինքնություն չունեցող բանիմաց միջազգային մասնագետների եւս): Եթե դա չանենք, ու դրանից հետո էլ չփորձենք մեր զարգացման հիմքում դնել Հայաստանի արժանապատիվ քաղաքացու եւ արդիական Հայաստանի տեսլականով պայմանավորված գործունեության ծրագիր, ապա թռիչքների հնարավորություններ բացող արհեստական բանականության հայոց դարը, ըստ էության, գուցե թե շատ չտարբերվի, ասենք, հայոց ուշ միջնադարից: Հայաստանի պետությունը պետք է չուշանա, պետք է գործի, այլապես անիմաստ կկորչի ոսկե բովանդակություն ձեռք բերելու պոտենցիալ ունեցող ժամանակը... դա պետք է արվի, որպեսզի, ինչպես Զարյանն է ասում... լինելու, կերտելու ու ստեղծագործելու կամքով կարողանանք հասնել ինքներս մեզ ...

ԱՃՈՒՐԴ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, ք. Աշտարակ հասցեում գտնվող 0,1174 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 1450000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, ք. Աշտարակ հասցեում գտնվող 0,1494 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 1640000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, ք. Աշտարակ հասցեում գտնվող 0,3544 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 3470000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, ք. Աշտարակ հասցեում գտնվող 1,3 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 11900000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, ք. Աշտարակ հասցեում գտնվող 0,45 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 4870000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, ք. Աշտարակ հասցեում գտնվող 0,221 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 2550000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, ք. Աշտարակ հասցեում գտնվող 0,404 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 3900000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, ք. Աշտարակ հասցեում գտնվող 0,0584 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 650000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 24.02.2025թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2025թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

● *Փետրվարի 21, 22, 23-ին Խամաճիկների պետական թատրոնում տեղի կունենա Անբան հուռին.am մանկապատանեկան միջոռացումը: Տոմսերի արժեքը՝ 1500 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպիսի՞ իրավական գործիքներ են առկա շահերի բախման իրավիճակները զսպելու կամ կառավարելու համար:

Սերգեյ Վարդանյան (27 տարեկան)



ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ

ՊԱՏԱՍԽԱՆ. Շահերի կառավարման իրավական մեխանիզմները գտնվում են շարունակական եւ պարբերական բարելավման գործընթացում: Այդուհանդերձ, գործող իրավակարգավորումներն արդեն իսկ հնարավորություն են տալիս կառավարելի դարձնել դրանք՝ խուսափելու, հայտնելու, լուծելու կառուցակարգերի միջոցով: «Հանրային ծառայության մասին» օրենքը պաշտոն զբաղեցնող անձանց, որպես կանխարգելման մեթոդ, նախ եւ առաջ առաջարկում է ձեռնպահ մնալ շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց կամ որոշում ընդունելուց, այդ թվում՝ որոշման ընդունման նախապատրաստական աշխատանքներին մասնակցելուց: Միաժամանակ, նախատեսվում են առանձնահատուկ կարգավորումներ վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող անձանց եւ այդպիսիք չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց համար:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

ԺՈՂՈՎՈՒՐԴ. Կարգավորումների հիմնական տրամաբանությունն առաջին դեպքում ենթադրում է շահերի բախման մասին վերադաս անձին հայտնելու պարտավորություն, ով առաջարկում է իրավիճակի լուծմանն ուղղված որոշակի քայլեր: Մինչդեռ, վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող անձանց եւ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց օրենքը հնարավորություն է տալիս խորհրդատվություն ստանալու նպատակով դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Եթե բանկը հաճախորդի հաշվեհամարին գումարը երկու անգամ է փոխանցում, պարտավո՞ր է արդյոք հաճախորդը վերադարձնել այդ գումարը:

Անահիտ Ապրեսյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛, հաճախորդը պարտավոր է այդ գումարը հետ վերադարձնել, քանի որ անձը, ով առանց օրենքի, այլ իրավական ակտերի կամ գործարքի սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը)՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածով նախատեսված դեպքերի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածի 1-ին կետ):

Այս կանոնը կիրառվում է՝ անկախ այն բանից՝ անհիմն հարստացումը ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետեւանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բանկն իրավունք ունի նաեւ առանց հաճախորդի կարգադրության հաշվից գումար դուրս գրել դատարանի վճռով սահմանված դեպքերում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի

Հրազդանի համայնքապետարանի ժամացույցը տարին մեկ անգամ է ճիշտ ժամ ցույց տալիս՝ դեկտեմբերի 31-ին՝ ժամը 00:00-ին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-7 - 12 -3 + 2
Կոտայքի լեռներ	-6 - 10 -2 + 2
Կոտայքի նախալեռներ	-4 - 9 0 + 3
Գեղարքունիք	-6 - 11 -3 + 1
Լոռի	-7 - 10 -1 + 4
Տավուշ	-3 - 6 0 + 2
Արագածոտնի լեռներ	-9 - 14 -2 + 4
Արագածոտնի նախալեռներ	-1 - 3 -1 + 5

Արարատ	0 - 5 +1 + 4
Արմավիր	-3 + 1 +4 + 6
Վայոց ձորի լեռներ	-4 - 7 +2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	-2 + 2 +4 + 6
Սյունիքի հովիտներ	-6 - 9 0 - 4
Սյունիքի նախալեռներ	0 + 3 +7 + 10
ԼՂՀ	0 + 2 +7 + 9
Երեւան	-1 - 3 +8 + 10

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **6.2.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*